
**Վ. ՇԵՔՍՊԻՐԻ ՍՈՆԵՏՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԵՎ ԴՐԱՆՑ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԶ**

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Մ. Բ.

Պոեզիայի տարածված տեսակներից է ռոմանտիկ բանաստեղծությունը: Վիլյամ Շեքսպիրը նոր ժամանակների քնարական և ռոմանտիկ բանաստեղծության հիմնադիրներից մեկն է: Շեքսպիրի սոնետները յուրահատուկ ռոմանտիկ և բանաստեղծական բնույթ ունեցող սիրային նամակներ են, որոնք տարբեր խոհափիլիսոփայական մոտեցումներով արտահայտում են բանաստեղծի մեծ սերն իր ընկերոջ և թխահեր կնոջ նկատմամբ: Մի կողմից՝ սոնետների ընթերցումը կարող է լինել ավելի շատ հզոր զգացմունքների հոսք, քան բանականության վարժանք, մյուս կողմից՝ հակառակը:

Անդրադառնանք Շեքսպիրի սոնետների գրական պատմությանը, կառուցվածքային որոշ հարցերի և բովանդակության գաղափարային ու լեզվաոճական մեկնաբանմանը: Բանաստեղծական կառույցի ամենատարածված ձևը հանգավորված բանաստեղծությունն է: Որոշ հանգային ձևեր այնքան հաճախ են կիրառվել, որ դարձել են բանաստեղծական կայուն կառույցներ: Նման կառույց է սոնետը: Սոնետը 14 տողից բաղկացած բանաստեղծություն է, որն ունի յամբական հնգաչափի¹ և հանգավորման հաստատուն ձև: Այն իտալերեն բառ է և նշանակում է փոքրիկ, կարճ երգ²:

Սոնետներ գրելու արվեստը զարգացել է XVI դ. Իտալիայում և Ֆրանսիայում: XVI դ. 90-ական թթ. սոնետը դարձավ պոեզիայի ամենատարածված ձևը: Իտալական վերածննդի ժամանակաշրջանում (1200-1300-ական թթ.) բանաստեղծները սիրային բանաստեղծությունների բազմաթիվ շարքեր էին գրում, որոնք կոչվում էին «սոնետային շարքեր» («sonnet sequences»): Դանթեն սոնետներ է գրել Բեատրիչչեի, Պետրարկան՝ Լաուրայի, ֆրանսիական պալատի բանաստեղծ Պիեռ դե Ռոնսարը՝ Հելենայի համար: Այդ ժամանակաշրջանում Անգլիայում գրական ժանրերի և բանաստեղծական ոճերի մեծ վերափոխում տեղի ունեցավ: Անգլիական քնարերգությունն իտալական բանաստեղծության ազդեցության ներքո որոշակի փո-

¹ Յամբական հնգաչափն ունի տասը վանկ, իսկ վանկային յուրաքանչյուր գույգ՝ մեկ շեշտ:

² Իտալական սոնետը, որը նաև կոչվում է պետրարկյան սոնետ, բաղկացած է օկտավից (ութոտղանի տուն), որում շարադրված է թեման կամ իրադարձությունը, այնուհետև հաջորդում է վեց տողից բաղկացած տունը, որը տալիս է վերը շարադրվածի պատասխանը կամ լուսաբանում այն: Ութոտղանի տան հանգային կառույցը հետևյալն է՝ abba abba կամ abba acca: Այստեղ I, IV, V, և VIII տողերն ունեն մեկ միանման հանգավորում, իսկ II, III, VI, և VII տողերը՝ մեկ այլ միանման հանգավորում: Վեցտողանի տան հանգային կառույցը փոփոխական է, բայց սովորաբար լինում է cde cde, cdc dcd կամ cdc dee: Սկզբում սոնետ կոչվող որոշ բանաստեղծություններ ունեին 12 տող, իսկ մի քանիսը երբեմն 14 տողից շատ էին լինում (Wright, B. Louis, LaMar, A. Virginia. Shakespeare's Sonnets, USA, 1967, pp. xvii-xviii):

փոխությունների ենթարկվեց: Հիմնական ձևափոխումը իտալական բանաստեղծական կառույցի հարմարեցումն էր անգլիական բանաստեղծական լեզվին: Սոնետներն Անգլիա են ներմուծել անգլիացի բանաստեղծներ Յոթն ու Սրբեյը (Wyatt and Surrey) Հենրի VIII-ի իշխանության տարիներին արտասահման կատարած իրենց ճանապարհորդությունների ընթացքում: Պետրարկայի *abba abba cde cde* կամ *abba abba cdc dcd* հանգերը սոնետագիրները փոխարինեցին խաչաձև հանգերով, որն էլ դարձավ իտալական ձևի անգլիական համարժեքը³:

Անգլիայում 1591-1597 թթ. տպագրվել է սիրային ավելի քան 1200 սոնետ: Բազում սոնետներ ձոնված էին նաև հովանավորներին, կրոնին և փիլիսոփայությանը⁴: Սոնետային որոշ շարքեր ստացան ինքնակենսագրական բնույթ ունեցող պատմողական ձևեր⁵:

Վիլյամ Շեքսպիրի կիրառած ձևն ընդունված է համարել որպես անգլիական սոնետ կամ շեքսպիրյան սոնետ: Սոնետի շեքսպիրյան ձևը՝ իր յոթ տարբեր հանգերով, երեք համաչափ քառատներով, մի քնարական բանաստեղծություն է, որն ավարտվում է մեկ էպիգրամային երկտողով: Բացառություն են սոնետ 99-ը՝ բաղկացած 15 տողից, սոնետ 126-ը՝ 12 տողից, կից հանգավորմամբ, և սոնետ 145-ը, որ քառատնյա յամբական բանաստեղծություն է: Շեքսպիրյան սոնետի հանգավորումը հետևյալն է՝ *abab cdcd efef gg*:

Շեքսպիրը սոնետի նմուշներ կիրառել է իր գրական գործունեության հենց սկզբից⁶:
Ըստ լեզվի և պատկերային աշխարհի՝ սոնետ-

³ Յոթն ու Սրբեյը (Wyatt and Surrey) ասես միայն ներմուծեցին այս ձևը՝ անգլիական սոնետի հետագա զարգացումը թողնելով իրենցից հետո եկող գրողներին, քանի որ երկուսն էլ մահացան երիտասարդ հասակում: Անգլիական սոնետը բարգավաճեց վերածննդի ծաղկմանը զուգահեռ: Պետրարկյան «Կանզոնիերու» («Canzoniere») (անգլ. «Song Book»- «Երգերի գիրք») մասնագիտորեն հասավ նոր ձևերի ձեռքբերմանը: Սա մեծ ազդեցություն ունեցավ այնպիսի քնարերգուների վրա, ինչպիսիք են Պիեռ դե Ռոնսարը, Սրբ Ֆիլիպ Միդնեյը, Լուի դե Գոնգորան, Ջոն Դոնը և Վիլյամ Շեքսպիրը: Սրբ Թոմաս Յոթի և Սրբեյի կոմսի՝ Հենրի Հովարդի սոնետները հրապարակվեցին հրատարակիչ Ռիչարդ Թոթելի (Richard Tottel) «Երգեր և սոնետներ» («Songs and Sonnets») ժողովածուում (1557 թ.): Էդմունդ Սպենսերն իր «Ամորեթի»-ի («Amoretti») (1595) համար ստեղծեց սեփական հանգային կառույցը՝ *abab bcbc cdcd ee*:

⁴ Sir Sidney Lee, A Life of William Shakespeare, London, 1915, pp. 716-717:

⁵ Հենց այս փաստի վրա հիմնվելով էլ գիտնականները փորձել են Շեքսպիրի կյանքին ծանոթանալ՝ ըստ նրա սոնետների: Բայց բանաստեղծություններում ինքնակենսագրական տվյալներին վերաբերող որևէ փոխադարձ համաձայնության նրանք այդպես էլ չեն եկել:

⁶ Իր վաղ դրամատիկ չափածո խոսքում նա տասը այդպիսի կիրառում ունի: Յոթ օրինակ կա «Միրո ապարդյուն ճիգերը» կատակերգությունում. I. i 80-93, 163-176; iv. ii. 109-122; iii. 26-39, 60-73; v. ii. 343-356; 402-415: «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգությունում երկու խմբերգերը (I և II գործողություններից առաջ) նույնպես արտահայտված են սոնետային ձևով: «Ամեն ինչ լավ է, թե լավ վերջանա» կատակերգության հերոսուհի Հելենայի նամակներից մեկը ևս սոնետային կառույց ունի (III. IV. 4 -17): Ենթադրվում է նաև, որ Շեքսպիրն ինչ-որ այլ սոնետի՝ «Phaeton to His Friend Florio»-ի հեղինակն է, որը 1595 թ. որպես առաջաբան կցվել է Ֆլորիոյի՝ ուսանողների համար նախատեսված «Second Frutes» իտալա-անգլիական երկխոսության շարքին: 1593 թ. Շեքսպիրն իր ամենավաղ հրատարակված պիեսի՝ «Վեներա և Ադոնիս»-ի համար ձեռք էր բերել մի ազնվականի հովանավորությունը: Դրանից հետո նա կանոնավոր ձևով ձեռնարկեց սոնետագրության դրամատիկ երկից դուրս: Կան վարկածներ, որ սոնետների մեծ մասը ստեղծվել էր, մինչ երկու արձակ բանաստեղծությունները 1593 և 1594 թվականներին ընթացքի մեջ էին (Sir Sidney Lee, նշվ. աշխ., էջ 154-155):

ներն անմիջականորեն կապվում են այն բանաստեղծական և դրամատիկ գործերի հետ, որոնք պատկանում են Շեքսպիրի վաղ շրջանի գրչին: Ըստ դարձվածաբանության՝ նրանք զուգակցվում են ավելի ուշ շրջանի պիեսներին՝ լինելով ծավալով ավելի քիչ, քան 1593 և 1594 թթ. գրված արձակ բանաստեղծություններում կամ պիեսներում: Ներկայիս ապացույցները ենթադրում են, որ բանաստեղծությունները գրվել են մոտավորապես հետևյալ ժամանակաշրջաններում. 1-60-1595-96, 61-103-1594-95, 104-126-1598-1604, 127-154- 1591-95⁷: Շեքսպիրն ինքը չի հրատարակել իր սոնետները: Նա դրանք տարածում էր ձեռագրով:

Վիլյամ Ջագգարդն առանց հեղինակային իրավունքի 1599 թվականի բանաստեղծական ժողովածուում հրատարակության տվեց 138 և 144-րդ սոնետները և ժողովածուն վերնագրեց «Վիլյամ Շեքսպիրի կրքոտ ուխտագնացը» (“The Passionate Pilgrim by W. Shakespeare”) : Այս ժողովածուն նրա համար հրատարակեց Թ. Ջադսոնը: Սոնետները հատորի սկզբում են:

Թումաս Թորփը 1609 թ. Շեքսպիրի սոնետների ողջ շարքը գաղտնի հանձնեց Ջորջ Էլլիի հրատարակչությանը: 1609 թ. հատորում 154 սոնետ կա, որոնց հաջորդում է «Տիրուհու տրտունջը» պոեմը: Շեքսպիրի ձեռագրով ո՛չ սոնետների, ո՛չ էլ նշված պոեմի տարբերակները պահպանված չեն, բայց տպագրված տեքստի որոշ առանձնահատկություններ ենթադրում են, որ պատճեններն անընթեռնելի էին կամ վերջնականորեն սրբագրված չէին. քուարտոյում կան առանց հանգավորման տողեր (25.9, 69.3, 113.6), 36-րդ և 96-րդ սոնետների վերջին երկտողերը կրկնվում են, 99-րդ սոնետը բաղկացած է տասնհինգ տողից, 146-րդ սոնետի երկրորդ տողը ոչ տաղաչափորեն կրկնում է առաջին տողի արտահայտությունը, երբեմն «քո» (“thy”) դերանվան փոխարեն տպագրված է «նրանց» (“their”) դերանունը: Այս սխալի կրկնությունը դադարում է 128-րդ սոնետում: Սոնետային շարքում հանդիպում ենք նաև որոշ արտասովոր

ուղղագրությունների⁸:

⁷ The Oxford Shakespeare: The Complete Sonnets and Poems, ed. by Colin Burrow, United States, 2008, pp. 104-105.

⁸ Քուարտոյում «նրանց» և «քո» դերանունները շփոթված են 26.12-ում, 27.10-ում, 35.8-ում, 37.7-ում, 43.11-ում, 45.12-ում, 46.3-ում, 46.8-ում, 46.13-ում, 46.14-ում, 69.5-ում, 70.6-ում, 128.11-ում, 128.14-ում, հավանաբար նաև՝ 85.3-ում: Ամենահավանական բացատրությունը (որը առաջարկել է Մալոնը) այն է, որ պատճենն անձնական դերանվան համար երկտառանոց հապավումներ ունեն, որում «նրանք» և «քո» դերանունները նման էին: Հեղինակը թխահեր կնոջը մըշտապես դիմում է «դու»-ով (“thou”), որը գուցե գրաշարին օգնել է հասկանալու անընթեռնելի պատճենը (2.1-ի և 1.5-ի կիրառումները սոնետների շարքի առաջին մասում կամ 1.6-ում, եթե հաշվի առնենք «նրանց»-ի փոխարեն գրված սխալ տպագրությունները): Մա ենթադրում է, որ 128-րդ սոնետից հետո գրված սոնետների պատճենն ուղղագրությամբ էականորեն տարբերվում էր սոնետների առաջին մասից, որը պարզ է դառնում նաև եզակի և արտասովոր ուղղագրությամբ՝ “broake” (i.e. “broke”) բառը միայն սոնետ 143.2-ում և 152.3-ում կարելի է հանդիպել, “bouldnes” (i.e. “bouldness”) բառը այսպես մեկ անգամ է գործածված, “ynough” (i.e. “enough”) բառը, որը հանդիպում է 133.3-ում, նաև առաջին քուարտոյի «Տըրոիլոս»-ում է գրված (նույնպես տպագրված 1609 թ. Էլլիի կողմից), 142.14-ի “mai’st” (i.e. “mayst”) բառը միայն այս սոնետում է գործածվում, “wofull” (i.e. “woeful”) բառը սովորաբար մինչև 1600 թ. էր կիրառվում: Այս վարկածը ենթադրաբար զուգակցվում է այն պնդմանը, որ 126-154-րդ սոնետները կարելի է դասել ավելի վաղ գրված բանաստեղծությունների շարքին (նույն տեղում՝ էջ 92-93):

Սոնետների շարքի երկրորդ ժողովածուն լույս տեսավ 1640 թ.: Հատորյակի հրատարակիչ Բեն Ջոնսոնը 1609 թվականի քուարտոյի հերթականությունը չպահպանեց: Նա բանաստեղծությունների երեք արական դերանունները փոխարինեց իգականով, որով ուզում էր շեշտել, որ սոնետների մեծ մասը թխահեր կնոջն են ուղղված: Հատորյակում բաց են թողնված 18-րդ, 19-րդ, 43-րդ, 56-րդ, 75-րդ, 76-րդ, 96-րդ և 126-րդ սոնետները⁹: 1609 թ. հրատարակության 67-րդ սոնետը բացում է շարքը, իսկ 144-րդ սոնետը 32-րդն է¹⁰: Բենսոնի հրատարակության մեջ յուրաքանչյուր սոնետ վերնագիր ունի, բայց պատահում է, որ երկու կամ երեք սոնետ նկարագրական մեկ վերնագրով են հանդես գալիս: Բենսոնը նաև վերահրատարակեց 1612 թ. «Կրքոտ ուխտագնացը» ժողովածուի բանաստեղծությունները:

Լինտոտը (Lintot) 1711 թ. վերահրատարակեց քուարտոն 1609 թ. հաջորդականությամբ: Գրեթե նույն ժամանակամիջոցում Գիլդոնը (Gildon) լույս ընծայեց 1640 թ. նոր հրատարակությունը՝ հետևյալ վերնագրով՝ «Բանաստեղծություններ տարբեր իրադարձությունների մասին» (“Poems on several occasions”)¹¹: Այնուհետև՝ 1780 թ., սոնետները վերահրատարակեց Էդմոնդ Մալոնը (Edmond Malone) քուարտոյի նույն հաջորդականությամբ: Այդ ժամանակվանից ի վեր սոնետները վերահրատարակվել են 1609 թ. քուարտոյի հաջորդականությամբ, թեև մշտապես դրանք վերադասավորելու փորձեր են արվել:

Բոլոր 154 սոնետների ընթերցումից հետո ակնհայտ է, որ դրանք կանխամտածված հաջորդականություն չունեն: Հաջորդականության միակ նմանությունը նրանց բաժանումն է երկու անհավասար մասերի: 1-126-րդ սոնետներն ուղղված են երիտասարդ ազնվականի կամ մրցակից բանաստեղծի (ենթադրվում է, որ դրանք նվիրված են միայն մեկ երիտասարդի, սակայն այս հանգամանքը որոշակիացված

⁹ *The Temple Shakespeare: The Sonnets*, London: Dent, 1896, p. v.

¹⁰ Sir Sidney Lee, *նշվ. աշխ.*, էջ 547:

¹¹ *The Temple Shakespeare: The Sonnets* p. vi; Ingram W. G. and Redpath Theodore, *Shakespeare's Sonnets*, p. xxi.

չէ)¹², իսկ 127-154-րդ սոնետները՝ մի թխահեր կնոջ, որի ինքնությունը նույնպես լուսաբանված չէ¹³: Այլ աղբյուրների համաձայն՝ 153-րդ և 154-րդ սոնետներն ուղղված են Կուպիդոնին, այսինքն՝ այս դեպքում սոնետները բաժանվում են երեք անհավասար մասերի¹⁴: Այս բաժանումներից բացի՝ կարելի է առանձնացնել բանաստեղծությունների փոքրիկ խմբեր, թեև որոշ դեպքերում սոնետներն առանձին են հանդես գալիս: Շեքսպիրի 1-17-րդ սոնետները երիտասարդին համոզում են ամուսնանալ, երեխաներ ունենալ և այդպես անմահանալ: Այս թեման լիովին արտահայտվում է հայտնի 18-րդ՝ «Կարիք կա՝ արդյոք քեզ համեմատել ամռան օրվա հետ» (“Shall I compare Thee to a summer’s day”) սոնետի վերջում՝ «Մինչ մարդիկ շնչում և աչքերը մինչ տեսնում են սրանք, / Դու չես մահանա, և իմ տողերը քեզ միշտ կտան կյանք» (“So long as men can breathe or eyes can see, / So long lives this, and this gives life to thee”) : Նույն թեման կրկնվում է այլ սոնետներում (55, 60, 63, 74, 81, 101, 107): Շատ սոնետներում խոսվում է սիրահարի գիշերային տառապանքների (27, 28, 43, 61) և այն մասին, որ սիրած էակից հեռու գտնվելով՝ սիրահարն անկարող է տեսնել զարնան և ամռան գեղեցկությունը (97, 98): 33-42-րդ սոնետները պատմում են օտարացման, իսկ հետո նաև՝ հաշտեցման մասին. սերը անմահ լինելու համար ստիպված է պայքարել փոփոխության և ժամանակի սպառնալիքի դեմ: Սերը նկարագրվում է չորս տարրերի՝ հողի, օդի, ջրի և կրակի հատկանիշներով (44-45), իսկ 65-րդ սոնետում խոսվում է կործանիչ մահվան մասին: Ժամանակ առ ժամանակ բանաստեղծը երիտասարդին հանդիմանում է, որ վերջինս իր բացակայության ժամանակ գերել է իր սիրուհուն, բայց սիրահարը ներում է նրան (32-35, 40-42, 69, 95-96): 78-86-րդ սոնետներում երիտասարդը մեղադրվում է, քանի որ հովանավորությունը շնորհում է մրցակից բանաստեղծների: 104-րդ սոնետում նշվում է, որ երիտասարդի և բանաստեղծի միջև հարա-

¹² 1609 թվականին Ջ. Էլդի հրատարակած սոնետների ամբողջական շարքը սկսվում է մի ձոնով, որը հասցեագրված է ինչ-որ պարոն Վ. Հ.-ի (Mr. W. H.): Սա հիմք էր այն վարկածի, որ երիտասարդ ազնվականը հենց պարոն Վ. Հ.-ն է, բայց վերջինիս ուղղված “begetter” բառը որոշ գիտնականներ բանասիրական հիմքերի վրա ընդունում են որպես “procurer” («ձեռք բերող, հայթայթող»): Հետևաբար՝ պարոն Վ. Հ.-ն սոնետների մեծ մասի ոգեշնչող ընկերը չէ, այլ այն անձնավորությունն է, որ հանձնել է բնագիրը հրատարակչին (Rowse, A. L. Shakespeare’s Sonnets, London, 1964, p.18) : Սաութհեմփթոնի կոմսը՝ Հենրի Բիթթեսլին (Henry Wriothesley) , և Փեմբրոքի կոմսը՝ Վիլյամ Հերբերտը նա համարվել են պարոն Վ. Հ.-ի թեկնածուները և սոնետները ոգեշնչող երիտասարդները (Ousby, Ian. The Cambridge Guide to Literature in English, UK, 2003, p. 856):

¹³ Ենթադրվում էր, որ Շեքսպիրի սոնետների թխահեր կինը իտալուհի Էմիլիա Բասանոն է (Shakespeare’s Italian Connection by Nicholas A. Patricca, www.dramaticpublishing.com/AuthorsCornerDet.php?titlelink=9731&sortorder=1): Առեղծվածային տիրուհին նաև համարվել է Մերի Ֆիտոնը (Mary Fitton)՝ թագուհի Եղիսաբեթի սպասուհիներից մեկը, որը ժամանակին եղել է Փեմբրոքի սիրելին: Բայց նրա դիմանկարներից պարզ է դարձել, որ նա ոչ թխահեր էր, ոչ էլ սևայտ (Wright, B. Louis, LaMar, A. Virginia. Shakespeare’s Sonnets, USA, 1967, p. xii):

¹⁴ Rowse A. L. William Shakespeare. A Biography, London, 1963; Shakespeare’s Poetry: The Sonnets: www.bardweb.net/poetry.html.

բերությունները շարունակվել են երեք տարվա ընդմիջումից հետո: Ժամանակի մասին ակնարկներ կարելի է գտնել նաև այն սոնետներում, որտեղ տարվա եղանակների մեջբերումներ կան: Որոշ սոնետներ ունեն պատմական այլաբանություններ (օրինակ՝ 107-ը և 124-ը)¹⁵: 116-րդ սոնետը՝ «Ես չեմ ընդունի սիրող սրտերի միության հանդեպ դավաճանություն և խոչընդոտներ» ('Let me not to the marriage of true minds admit impediments'), հաստատում է, որ «Նա [սերը] ժամանակի խեղկատակը չէ» ('Love's not time's fool'), այլ մշտնջենական սիրուն բնորոշ է անխախտ հավատը: Ընկերոջն ուղղված վերջին բանաստեղծությունը (126) անդրադառնում է այն բազմաթիվ բառերին ու պատկերներին, որոնք շարքում ավելի վաղ են կիրառվել. «պարտք» ("audits", "debts"), «մանգաղ» ("sickles"), «քաղում» ("plucking")¹⁶: Թվում է, թե այն առաջին մասի ընդհանրացումն է: 127-152-րդ սոնետներն արտահայտում են բանաստեղծի անպատասխան սերը թխահեր կնոջ նկատմամբ: Այս շարքի 137-րդ, 141-րդ և 148-149-րդ սոնետներում խոսվում է սիրուց կուրացած աչքերի ու սրտի մասին: 133-136-րդ և 142-144-րդ սոնետները թխահեր կնոջ անհավատարմության մասին է մրցակից բանաստեղծի հետ, ինչպես նաև բանաստեղծ, ընկեր, սիրուհի եռանկյունու¹⁷: 135-136-րդ և 143-րդ սոնետներում առկա է "Will" բառը, որը քառիմաստ բառախաղ է Շեքսպիրի անվան շուրջ: Շատ սոնետներում (131, 139-140, 152) սիրուհին մեղադրվում է անգթության ու երդմնազանցության մեջ: Կուպլիդոնին ուղղված սոնետներում (153, 154) նկարագրված կրակները և տաք լոգանքներն ակնարկում են հարավարևմտյան Անգլիայում գտնվող Բաթ քաղաքի բուժիչ աղբյուրները: Հավանաբար դրանք հունական էպիգրամի լատիներեն թարգմանության վրա են հիմնված¹⁸:

Սոնետներում փոխաբերական լեզվով անընդհատ խոսվում է ժամանակի, մահվան, փոփոխության, սիրո, կրքի և գեղեցկության մասին: Շեքսպիրը մտքի և զգացմունքի պատկերները հաճախ կիրառել է որպես մեկ ամբողջացնող տարր և ստեղծել նոր բարդ փոխաբերություններ: Այս ձևով վերջիններս միաժամանակ մի քանի դեր են կատարում և տարբեր զարգացումներ ստանում: Սոնետների պատկերային աշխարհը սիմվոլիզմի յուրահատուկ արտահայտչամիջոց է: Այն ավելի լավ է լուսաբանում բանաստեղծությունների ներքին իմաստը, քան որևէ այլ հնարք: Այստեղ պատկերները լրացուցիչ կամ երկրորդական չեն, այլ դրանց միջոցով արտահայտվում է գործողության ողջ էությունը: Օգտագործելով բառային երկիմաստություն՝ բանաստեղծը ցույց է տվել արտասովոր

կերպով

միաձուլ-

¹⁵ *The Temple Shakespeare*, p. x.

¹⁶ *The Oxford Shakespeare*, p. 117.

¹⁷ *Մրցակից բանաստեղծները համարվել են Ջորջ Չեփմենը, Քրիստոֆեր Մարլոն, Մամուել Դանիելը, Դրայթոնը և դրամատուրգներ Բեն Ջոնսոնն ու Մարսթոնը* (Wright, B. Louis, LaMar, A. Virginia. *Shakespeare's Sonnets*, USA, 1967, p. xii; Sir Sidney Lee, նշվ. աշխ., էջ 203-204):

¹⁸ *The Temple Shakespeare*, p. vii.

ված զգայական իրավիճակների փոխհարաբերությունը: Սոնետներում հաճախ սովորական բառերով արտահայտված են անսովոր իմաստներ, որոնց միտքը պարզ է դառնում միայն համատեքստային վերլուծությունից:

Իմաստային ողջ խորությունն արտահայտելու համար Շեքսպիրն օգտագործել է նաև պարադոքս, անձնավորման մեթոդներ և երևակայական ու վերացական առանձնահատկությունների զարմանալի ոճ: Այսպիսով՝ ոճական հնարքները և՛ գույն, և՛ լուսաբանում են տալիս սոնետներին: Այս դրսևորումը ակնհայտ է ոչ միայն թեմայի բովանդակությունից, այլև զգացմունքների ներքին զարգացումը և դրանց լիակատար ընկալումն արտացոլող պատկերների ձևից ու ոճից:

Ըստ ոճի՝ կարելի է առանձնացնել սոնետների երկու յուրահատկություն: Առաջինը հնչյունների, հանգերի և իմաստի բարդ ներգործությունն է: Երկրորդ յուրահատկությունը հնարավոր ճարտասանական հնարքների կիրառումն է, օրինակ՝ այնպիսի բառերի կրկնությունը, որոնք ունեն կամ նույն, կամ տարբեր իմաստ:

Սոնետներում պատկերների հաջորդականությունը ներկայացնում է բանաստեղծի հոգեվիճակի փոփոխությունների ամբողջական պատմությունը: Այստեղ պատկերները և՛ սերտորեն փոխկապակցված են, և՛ միաժամանակ հանդես են գալիս որպես տարբերակվող նմուշներ: Ավելին՝ նրանք լիովին համապատասխանում են «ներքին դրամային» և սոնետների թաքնված մտքին:

Սոնետները XVI դ. հաճախ համարվում էին անձնականին վերաբերող ստեղծագործություններ: Դրանք նաև անձնական փոխանակումներ էին բանաստեղծի և նրա ընկերների միջև: Սոնետները տպագրվում էին պատահմամբ կամ տպագրողի խորամանկության շնորհիվ: Թորփսի հատորյակի լույսընծայումը ավելի է շեշտում սոնետների մասին այս տեսակետը՝ այն համարելով մի միջոց, որը սահմանում է անձնական թղթերի և տպագրված նյութի հատման գիծը: Սոնետների գրական պատմությունից պարզ է դառնում, որ գրեթե ոչինչ հայտնի չէ այն պատմական հանգամանքների մասին, որոնց ազդեցության տակ Շեքսպիրը գրել է իր սոնետները: Որոշակիացված չէ նաև, թե ում են հասցեագրված սոնետները և որոշակիորեն երբ են գրվել: Եվ եթե ամբողջովին նոր փաստեր ի հայտ չգան, որն այնքան էլ հավանական չէ, դա երբեք էլ հայտնի չի դառնա: Բայց այս փաստերի բացակայությունը չի ազդում սոնետների բովանդակային ու լեզվաոճական մեկնաբանման վրա: Սոնետների խմբերում հանկարծակի փոփոխություններ կան, սակայն իրար հաջորդող բանաստեղծությունների հանգային, թեմատիկ և բովանդակային կապերը նույնիսկ տարբեր թվացող խմբերի և ենթախմբերի մեջ փոխարինող ընդհանրություններ են ստեղծում:

Շեքսպիրի բառապաշարը հին ու նոր բառերի հետաքրքիր համադրում ունի: Հնացած բառերի ու արտահայտությունների կողքին շատ նորաբանություններ կան: Կառուցվածքային, ոճական ու լեզվական միջոցների շնորհիվ առանձին սոնետների յուրահատկություններն ու ներգործություններն առավել ընկալելի են դառնում:

**К ВОПРОСУ О ЛИТЕРАТУРНОЙ ИСТОРИИ И
ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКОМ КОММЕНТАРИИ К СОНЕТАМ В. ШЕКСПИРА**

ОГАННИСЯН М. Б.

Резюме

Шекспировская форма сонетов с семью рифмами (abab cdcd efef gg) , тремя симметричными куплетами является лирическим стихотворением, заканчивающимся одним эпиграммным двустишием. Хронология написания сонетов охватывает следующие годы: 1-60–1595-96 гг., 61-103–1594-95 гг., 104-126–1598-1604 гг., 127-154–1591-95 гг. Сонеты впервые были изданы в 1609 г. Сонеты 1-126 адресованы молодому пэру или соперничающему поэту, сонеты 127-152 – т,мноволосой леди и сонеты 153-154 адресованы Купидону.

Шекспир использовал в сонетах различные лингвостилистические средства. Лингвостилистические образы его сонетов говорят о психологических переживаниях поэта.